մի ժողովուրդ ինքը, սեփական ուժերով կատարել եւ յաջողցնել կարող է նրան էլ իրական տէրը կը մնայ: Եւ ո՛չ մի քաղաքական ղեկավարութիւն իրաւունք ունի՝ քարացած կառչած մնալ այս կամ այն օրիենտացիային, այս կամ այն քաղաքական տօգմային: Բոլոր պարագաներում կախուած մնալ ռուսի վիշից — անդամ երբ նա հրում, վանում է մեզ ու ձեռք մեկնում մեր թշնամուն — այդ նշանակում է՝ ռիսկի ենթարկել ժողովուրդի գոյութիւնն իսկ: Ո՛չ թէ յանուն օտարի, այլ յանուն մեր իսկ ազգային բարձրագոյն խնդալի՝ իրաւունք չունինք հեռաւոր կերպով իսկ հետեւելու նման քաղաքականութեան, որի — թէկուզ 1 առ հազար հաւանական անյաջողութիւնը Հայաստանի եւ հայ ժողովուրդի գոյութիւնն անդամ վտանգի պիտի ենթարկէ:

Ասողներ կան, թէ միեւնոյնն է, եկատագրական մօմենտին «դատապարտուած» են մեր ժողովուրդն ու երկիրը, թէ՝ Թուրքը որոշել է, ինչ գնով էլ լինի, մէջ տեղից վերցնել հայն ու Հայաստանը, մանաւանդ որ մենք համաթուրականութեան ճամբու վրայ ենք գտնուում: Ուստի, դատում են այդպէսները, ուրիշ ելք չկայ, եթէ ոչ «կամ կռուիլ ու ոչնչանալ, եւ կամ յաղթել ու տէր դառնալ սեփական հայրենիքին», աւելի շուտ՝ ամբողջական հայրենիքին: Ուրեմն՝ մի տեսակ «վա բանկի» խաղ, որ սակայն ժխտելի է իր հիմքում իսկ: Անհատները գուցէ կարող են այդպէս դատել, բայց ոչ երբեք՝ քաղաքական խմբակցութիւնները: Ճակատագրապաշտութիւնը ուեւէ ձեւով հաշտեցնել կարելի չէ՛ քաղաքական գործունէութեան հետ, որ ուղեղով հաշիւներ միայն պիտի անի, որ հազար ու մի գոներ որոնել ու բանալ պարտաւոր է: Հարցը այդպէս դնել, ճակատագրապաշտօրէն, նշանակում է պարզապէս յուսալքման ու վհատման է ենթարկել մեր ժողովուրդը, մեռցնել նրա մէջ՝ ամէն մի ինքնագործունէութիւն: «Կա՛մ–կա՛մ» երկընտրանքը տրամաբանօրէն միայն ճակատագրական վախճանի յանգել տալ կարող է,— մարել բոլոր ուժերը ինչպէս անհատի, այնպէս նաեւ հաւաքականութեան ներսում:

Հարցը այդպէս դնել,— «կա՛մ հայը եւ կամ Թուրքը», եւ կամ՝ «հայը արդեւք է համաթրքական ծրագրի առջեւ, ուստի եւ պիտի վերանայ մէջտեղից նրա յաջողութեան պարագային», այդ նշանակում է՝ առաջուց իսկ դատապարտել հայն ու Հայաստանը, որպէս բացարձակապէս Թոյլ կողմ՝ նման իրերաջինջ կռուի մէջ: Այդ նշանակում է՝ Հայաստանի 7–800 հազար հայութիւնը տանել կանգնեցնել Տաճկաստանի նուազագոյն 7–8 միլիոն եւ Ադրբէջանի 1½ միլիոն Թրքութեան դէմ: Եւ դեռ չհաշուած՝ պարսկական Ատրպատականի եւ Թուրքեստանի Թրքութիւնը, նկատի չառած նաեւ վրացիների ու կովկասեան միւս ժողովուրդների բռնելիք դիրքը, որ, լաւագոյն պարագային, մեր վերաբերմամբ միայն չէզոք լինել կարող է: Ո՛վ այդպէս է դատում, ո՛վ հայ ժողովուրդի եւ Հայաստանի ճակատագիրը պարզապէս երկընտրանքի առաջ է կանգնեցնում, նա իրաւունք իսկ չունի՝ քաղաքականութեամբ զբաղուելու: Մարդիկ իրենց անհատական գոյութիւնն անդամ երկընտրանքի առջեւ չեն կանգնեցնում — հաշուի չառած հոգեկան հիւանդները եւ բացառիկ հերոսները, անհատները իրենց նիւթական կարողութիւնն անդամ դիւրաւ ռիսկի չեն ենթարկում, ո՞վ է ուրեմն մեզ իրաւունք տալիս, հանդուրժելու նման մտայնութեան, երբ ազգի ու հայրենիքի գոյութիւնն է խնդրոյ առարկայ:

Կարող են ասել, թէ այդպէս դատողները հայն ու Հայաստանը մինակ չեն պատկերացնում ճակատագրական բոպէին, այլ՝ «դաշնակցած» ուրիշ, ուժեղ ազգակների հետ: Առաջին հերթին՝ Ռուսաստանի հետ: Մենք տեսանք արդէն նրա վստահելիութեան աստիճանը: Զլսօսենք այդ մասին: Ռուսաստանին հետաքրքրում է ոչ թէ Հայաստանը որպէս այդպիսին, որպէս հայրենիքը հայ ժողովուրդի, այլ՝ որպէս տերրիտորիա: «Հայաստանը առանց հայերի» հրէշածին նշանաբանի հեղինակը չէ՞ որ ռուսն է եղած, այդ գիտենք ամէնքս: Ռուսը վստահ է որ վաղ թէ ուշ պիտի տիրէ այդ երկրամասին, նրա ի՞նչ հոգը, եթէ հայի տեղ Թուրքը նստած կը լինի այնտեղ: Եւ որ գլխաւորն է՝ մոռացում է ամենայոռի պարագան — Ռուսաստանի անյաջողութիւնը եւ կամ, ներքին խռովութիւնների եւ նոր յեղափոխութեան դէպքում, ռուս բանակների կը-